Յակոբ Կաթողիկոս նախանձախնդրութեամբ միջամուխ կ՚ելլայ նաև Գանձասարի Կաթողիկոսական Աթոռի գործերուն։

Այսպէս, երբ 1675ին Զուղայի մէջ կը վախճանի Աղուանից Տէր Պետրոս Կաթողիկոսը, և բռնութեամբ իշխանութեան կը տիրանայ Սիմէոն Վարդապետ, և Գանձասարի Աթոռին ինչքերն իր գիւղը փոխադրելով, հոն կը հաստատուի, Յակոբ Կաթողիկոս զայն կը բանադրէ, և եպիսկոպոս կը ձեռնադրէ, և Կաթողիկոս կ՚օծէ աղուանցի Երեմիա Վարդապետը, և զայն կ՚առաքէ Գանձասար։ Սիմէոն կ՚ընդդիմանայ նորօծ Կաթողիկոսին և խռովութիւն կը յարուցանէ։ Յակոբ Զուղայեցի՝ Սիմէոնն ու Երեմիան Էջմիածին կը կանչէ, և բազմիցս խրատելէ յետոյ, Սիմէոնէն կ՚առնէ ձեռագիր մը, որով սա կը հրաժարի Կաթողիկոսական գործերէ, այսինքն եպիսկոպոս ձեռնադրելէ և մեռոն օրհնելէ (1677)։

Սակայն հակառակ այս պաշտօնական խոստումին, տակաւին կը շարունակուի հակամարտութիւնը երկու կողմերու միջև, նաև Յակոբ Կաթողիկոսին մահէն ետք։ Զուղայեցիին յաջորդը՝ Եղիազար Կաթողիկոս, երկու կուսակցութեանց ևս գոհացում տալու նպատակաւ, Սիմէոնն ու Երեմիան աթոռակից և համահաւասար կը հռչակէ։ Սակայն Սիմէոն կը յամառի ինքնիշխան գործել։ Այնուհետև Եղիազար զայն